Իտալական պարլամենտի մէջ արտաքին գործերի մինիստրը ասաց, որ լրագրական լուրերը Մարսելի անկարգութիւնների զոհերի թիւի մասին չափազանցացրած են և հակասում են պաշտօնական տեղեկութիւններին։ Մինիստրը աւելացրեց, որ կարգադրված է վարչական քննութիւն կատարել։ Իտալական հիւպատոսի ցանկութեան համեմատ քննութեան ժամանակ ցուցմունքներ կը տան և իտալացի վկաները։ Սպանվածներից միայն մէկը իտալացի է։ Հիւանդանոցների մէջ կան 13 վիրաւորվածներ և մի քանիսն էլ մասնաւոր տներում։ Կալանաւորված 200 իտալացիներից և ֆրանսիացիներից մի քանիսը ազատված են, միւսները յանձնված են դատարաններին։ Մինիստրը խնդրեց չափազանցութիւններ չանել, որովհետև նրանք առիթ են տալիս թշնամական ցոյցերին և խանգարում են կարգապահութեանը։ „Մինիստրութիւնը, ճանաչելով իր պարտականութիւնը, աւելացրեց նա, խնդրում է պարլամենտի պաշտպանութիւնը, որպէս զի նա կարողանայ խօսել և գործել ազգի կողմից։ Նա կաշխատի պատահած անցքերի պատճառները մեկնել։“

## ՍՊԱՆԻԱ

Սպանիական պօլիցիան ֆրանսիական սահմանների մօտ գտաւ կարլիստներին պատկանող զէնքերի պահեստ։ Մադրիդի փողոցներում երկրորդ անգամ ճայթիւն գործեցին պետարդայով։ Այս անգամ երեք երեխաներ վիրաւորվեցան, որոնցից մէկը խիստ վախճանվեցաւ։ Սպանիական կառավարութիւնը վճռել է շատ լաւ ընդունելութիւն անել այն հրէաներին, որոնք կը փախչեն Ռուսաստանից կամ այլ երկիրներից և Սպանիա կը գաղթեն։ Այս նպատակով հիմնած է առանձին ծովային յարաբերութիւն Օդէսայի, Կ. Պոլսի և Սալոնիկի մէջ մի կողմից և սպանիական նաւահանգիստներից մէկում Միջերկրական ծովի վրա միւս կողմից։ Հրէական ընտանիքներ անվարձ կը տանվեն սպանիական երկու նահանգներ, որտեղ կառավարութիւնը կամենում է հրէական գաղթականութիւններ հիմնել։ Բացի այդ սպանիական կառավարութիւնը կը բանայ իր հաշուով Կ. Պոլսի և Սալոնիկի մէջ ուսումնարաններ, որոնց մէջ անվարձ կաւանդվեն ոչ թէ միայն սպանիական լեզուն և գրականութիւնը, այլ և ուրիշ գիտութիւններ։ Սպանիական դեսպանին Կ. Պոլսի մէջ ներկայացաւ հրէաների պատգամաւորութիւն վերոյիշեալների ճշմարտութիւնը ստուգելու համար, իսկ դեսպանը, ինչպէս հաղորդում է „Polit. Corresp.“ լրագիրը, դրական պատասխան տուեց։

## ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական հանրապետական գործիչների մէջ չէ նկատվում այն միաբանութիւնը, որ վերջին տաս տարիների ընթացքում նը-պաստում էր նրանց սկսած ձեռնարկութիւններին և որի շնորհիւ նրանք յաղթող էին դուրս գալիս ամեն տեսակ դժուար գործերից։ Հանրապետականներից մի քանիսը դեռ ևս շարունակում են գործել Գամբետտայի առաջնորդութեամբ, միւսները հակվում են Գրեվիի և Ժիւլ-Ֆերրիի կողմը, երրորդները գործում են Կլեմանսօի և նրա հանախոհների հրահանգների համեմատ։ Գամբետտայի հեղինակութիւնը շատ նուազվեցաւ նրա արած վաղաժամ ճանապարհորդութեան պատճառով։ Այդ իրողութիւնը աւելի լաւ երևում է լրագիրների յօդուածներից և Ժիւլ-Ֆերրիի նորերումս արտասանած ճառերից։ Զափաւոր ընդունակութիւնների տէր այդ մինիստրը, որ մի ժամանակ Գամբետտայի հաւատարիմ կուսակցի դեր էր կատարում, այժմ սկսել է խօսել այն ասպիճան ինքնահաւան և հրամայողական ձևով, կարծես նա լինի հանրապետական կուսակցութեան իսկական առաջնորդը։ Լրագիրներից մի քանիսը Ժիւլ-Ֆերրիին առաջնակարգ պետական մարդ և ֆրանսիական հասարակութեան չափաւոր տարրերի իսկական առաջնորդ անուանեցին։ Առանձին համեստութիւն չունենալով և իր նախկին գլխաւոր Գամբետտային կատարելապէս յաղթված համարելով, Ժիւլ-Ֆերրի իրան է վերաբերում չափաւոր հանրապետութեան հաստատելը և ֆրանսիական լուսաւորութեան վերանորոգման գործը։ Ֆրանսիական քաղաքականութեան նեցուկը Գրեվին է յայտնվում, որի մաքերի բացատրողը Ժիւլ-Ֆերրին է։

Ժիւլ-Ֆերրիի ձգտումները նրան շուտով անկման կը հասցնեն, որովհետև պատգամաւորների ապագայ ընտրութիւնները հազիւ թէ մինիստրական ոգով կատարվեն։ Ֆրանսիական ընտրողները սովոր չեն հետևել երկրորդական գործիչների ներշնչումներին և չեն համաձայնի գերադասել Գամբետտայից սրա նախկին աշխատակցին։ Գամբետտայի անունը այնքան ամուր կապված է „չափաւոր հանրապետութեան“ հիմնելու գործի հետ, որ ոչ ոք չի հաւատայ Ժիւլ-Ֆերրիին, իբր թէ այդ գործին գլխաւորապէս նրա մինիստրութիւնն է նպաստել։ Վերջին տաս տարիների ընթացքում Ֆրանսիայի մէջ շատ մինիստրութիւններ է եղել, իսկ Գամբետտա մնացել է հանրապետական գաղափարների միակ իսկական արտայայտիչ և միևնոյն ժամանակ հանրապետական ամենաընդունակ գործիչ, թէպէտ նա ժամանակ առ ժամանակ պարլամենտական անաջողութիւնների է հանդիպել։ Ապագայ ընտրութիւնները գուցէ աւելի արմատական պատգամաւորների ժողով կընտրեն, բայց նա երբէք այնքան անգործունեայ չի լինի, որքան ցանկանում է Ժիւլ-Ֆերրի։ Բելվիլի ընտրողական շրջանի մէջ Գամբետտա շուտով քաղաքական մի ճառ կարտասանի, որից կերևայ, թէ որքան իրաւացի են Ժիւլ-Ֆերրիի հայեացքները։

Մարսելի մէջ պատահած անկարգութիւններից յետոյ հիւանդանոցի մէջ վախճանվել են երեք ֆրանսիացի և մի իտալացի վիրաւորվածներ։ Նրանց թաղման օրը և տեղը գաղտնի են պահում, որպէս զի նոր անկարգութիւններ չը պատահեն։ Մարսելի բնակիչները վատ են տրամադրված, առևտուրը և արդիւնաբերութիւնը դադարել է։

Մարսելի մէջ հանգստութիւնը կատարելապէս վերականգնված է, իսկ փարիզում անկարգութիւններ տեղի ունեցան ֆրանսիական և իտալական բանւորների մէջ, բայց առանց վատ հետևանքների։ Իտալական գաղթականութիւնը Փարիզի մէջ երեք պատգամաւորներ ընտրեց, որոնք շնորհակալութիւն պէտք է յայտնեն Գրեվիին կառավարութեան գործադրած միջոցների համար և ցաւակցութիւն Մարսելի մէջ պատահած անկարգութիւնների առիթով։

## ԱՆԳԼԻԱ

Իրլանդական կալուածական միութեան կենտրոնական մասնաժողովը Դուբլինի մէջ հաշիւ տուեց, որից երևում է, թէ մի շաբաթվայ ընթացքում միութեան գանձարանը նուիրատուութիւններ է ստացել հապարֆունտ ստերլինգից աւելի, իսկ երեք շաբաթների ընթացքում կալանաւորված իրլանդացիներին և արտաքսված ֆերմերներին օգնելու համար միութիւնը ծախսել է 2,700 ֆունտ ստերլինգ։

Հնդկաստանից նոր տեղեկութիւններ են հաղորդում Էյիւբ-խանի յաղթվելու մասին։ Նրա զօրքերը յաղթվեցան երեք ժամ տևող պատերազմից յետոյ և կորցրին 130 մարդ, բացի 57 գերիներից։ Աֆղանական էմիրի կորուստները ընդամենը չորս վիրաւորվածներ են։ Ասում են, որ թէ աֆղանական էմիրը և թէ Էյիւբ-խան կամենում են մօտենալ պատերազմական բեմին, բայց նրանք վախենում են թողնել իրանց մայրաքաղաքները, որտեղ կարող է ապստամբութիւն ծագել և այն ժամանակ կանգնաղարը նրա ձեռքը կընկնի, ով որ այնտեղ շուտ կը հասնի։

Լօնդօնից հաղորդում են, որ համայնքների ժողովի անդամ Լաբուշեր մտադիր է անել հետևեալ առաջարկութիւնը. „Համայնքների ժողովը ցանկալի է համարում փոփոխել այժմեան ձևը, որ թոյլ է տալիս օրէնսդրական ժառանգական խումբին փոփոխել ժողովրդի վճիռները, որոնց կայացնում են նրա ներկայացուցիչները։“ Այդպիսով Լաբուշեր պահանջում է ոչնչացնել լօրդերի ժողովը։

„Standard“ լրագրի տեղեկութիւնների համեմատ ամերիկական կառավարութեան պատասխանը Անգլիայի յայտնի շրջաբերականին ֆենիիների մասին արդէն պատրաստ է։ Միացեալ Նահանգների կառավարութիւնը քաղաքավարի ձևով յայտնում է, որ երկրի օրէնքները ապահովում են իւրաքանչիւր բնակչի և մամուլի ազատութիւնը և որ կառավարութիւնը իրաւունք ունի միջամտել միայն այն ժամանակ, երբ յանցանք կը գործվի, բայց մինչև այժմ ոչ մի յանցանք չէ պատահած։ Ամերիկական լրագիրները շարունակ ծաղրում են Անգլիայի շրջաբերականը։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկական յայտնի ընկերութիւնը Փարիզի քաղաքային խորհրդին առաջարկեց կառուցանել Համաձայնութեան հրապարակի վրա մէկ գեղեցիկ և ամուր աշտարակ, 500 մետր (մօտ կէս վերստ) բարձրութեամբ։ Աշտարակի գագաթի վրա սանդուղքով չեն բարձրանայ, որովհետև այդ ասատիկ յոգնեցուցիչ ճանապարհորդութիւն կը լիներ։ Շրջականների տասարաններով զուարճանալ ցանկացողները զէպի վեր կը բարձրանան հիդրավլիական պտուտակով (ascenseur)։ Այժմ միայն կամենում են հետազօտել, թէ արդեօք այդպիսի մի հսկայական բուրգ կարող է անվտանգ մնալ թէ յաճախողների համար և թէ շրջակայ շէնութիւնների համար։

* * *

Ֆրանսիայում մեռաւ Եկատերինա Լէրօ անունով մէկ պառաւ օրիորդ 92 տարեկան հասակում։ Մահից առաջ նա կտակեց հրաւիրել նրանց, որոնք կը հետևեն նրա դիակին մինչև գերեզմանը, տալով իւրաքանչիւրին 100 հատ ձու, գեղեցիկ վէստֆալեան ապուխտ և բացի դրանից 30 ֆրանկ ծարաւը յագեցնելու համար այդպիսի ընթրիքից յետոյ. մի և նոյն ժամանակ խնդրում է, որ իր դագաղին հետևողներից ոչ մէկը լաց չը լինի, այլ ընդհակառակն, որ բոլորը ուրախ լինեն։ Հանդուցեալի կտակը ամենաճիշտ կերպով կատարվեցաւ։ Ընթրիքը շատ ուրախ անցաւ և հիւրերը պարեցին թաղման երկրորդ օրվայ մինչև կէսօրը։

* * *

Նորերումս Իլինոյսում մեռաւ մէկ գաղթական գերմանացի և թողեց մօտ 2,000,000 դոլլար փող, որ աշխատել էր 30 տարվայ ընթացքում։ Իր կտակի մէջ այդ հարստութեան ժառանգ նշանակեց Հոլլանդիայում բնակվող իր երկրացի մէկ մարդուն, որը մի ժամանակ իր մանկանալու և ընտանեկան ցաւի պատճառն էր եղել և այդ անաջողութիւնները ստիպել էին նրան գաղթել։ Կտակի մէջ ասված է. «Այդ մարդը միակն է աշխարհս վրա, որին ես պատճառ ունեմ ատելու, բայց իմ բարգաւորութեամբ վերջը կրկին նրան եմ պարտական, և այս պատճառով կամենում եմ երախտագէտ լինել։» Այդ բանը շատ մեծահոգութիւն կը լինէր, եթէ միլիոնաւոր ժառանգութեան ստանալը կապված չը լինէր մէկ կարգից դուրս պայմանի հետ։ Ժառանգը իր ամբողջ կեանքում պէտք է հագնէ կտակի մէջ ճիշտ որոշած սև բրդեայ նիւթից չոր պայծառ գեղնագոյն ժապաւէնով, մի և նոյն գոյնի գլխարկ գծերի գիշերագտակի նման փունջերով բոժոժների փոխանակ։ Հէնց որ նա ամենափոքր փոփոխութիւն կանի իր շորի մէջ, բոլոր հարստութիւնը անցնում է հանդուցեալի հեռու ազգականներին, որոնց թողված է մի քանի հազար դոլլար, որ նրանք բարեխղճաբար կարողանան հսկել այդ պայմանի կատարելուն։ Անկասկած, նրանք կը կատարեն կտակողի կամքը։ Բացի դրանից, եթէ այդ ժառանգութիւնը ընդունվի, այդ պայմանը պէտք է վեց մեծ լրագիրներում հրատարակվի, այնպէս որ բոլոր աշխարհը իմանայ ժառանգի անունը և անձնաւորութիւնը։ Բայց նրան կէս տարի ժամանակ է տրվում մտածելու։

* * *

Նորերումս Լվովում երրորդ յարկի պատուհանից փողոցի վրա գլխիվայր դուրս թռաւ օրիորդ Պ. իսկոյն տարվելով հասարակական հիւանդանոցը, նա մէկ ժամից յետոյ մեռաւ։ Այդ սարսափելի անձնասպանութեան պատճառը նրա մօր անարդար նախատինքն էր։ 18 տարեկան օրիորդ Պ. Լվովի ժողովրդական բանկի դիրեկտորի աղջիկն էր։ Իր քրոջ հետ միասին այդ երեկոյ նա բաւական ուշ վերադարձաւ տուն։ Այդ բանը առիթ տուեց օրիորդի մօրը ամենաանարդար կերպով յանդիմանել իր աղջկան, իբր թէ նա գիշերներով առանց պատճառի չէ դրսումում, որ նա ոչ դրից չէ ամաչում, արատաւորում է իրանց տունը և այլն։ Համենատ, բայց զրգռված այդպիսի անարդար մեղադրանքներով, աղջիկը կատաղած ազազակեց։ «Ուրեմն, եթէ դուք ասում էք, որ ես այդպիսին եմ... և արագութեամբ վազելով դէպի պատուհանը, գլխիվայր ընկաւ փողոցի վրա։ Հայրը հազիւ կարողացաւ հասնել նրան, բռնեց նրա շորից, բայց նրա ձեռքերի մէջ փէշի միայն կտորը մնաց։

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունիսի։ Էկզիմբուրգի իշխանը Պետրոպաւլովսկայա մայր եկեղեցում երիրպարեց Հանգուցեալ Թագաւորի և Թագուհու գերեզմաններին։

ԽԱՐԿՈՎ, 23 յունիսի։ Կրիվոյ Ռօգից հաղորդում են, որ այնտեղ հասել են ֆրանսիական երկրաչափներ, տեխնիկներ և բանւորներ հանքային կիտուածների յատակագծերը կազմելու և հետախուզութիւններ անելու կառուցվող երկաթուղու մօտ տանող ճանապարհներ շինելու համար։

ՕԴԷՍՍԱ, 23 յունիսի։ Հօնկօնգից հասաւ այստեղ Համբուրգի „Teronia“ շոգենաւը 55,000 պուդ թէյի բեռնով։ Այդ բեռը Մոսկվա է ուղարկվում։

ԼՕՆԴՕՆ, 23 յունիսի։ Այստեղի թիւրքաց դեսպան Մուսուրուս-փաշա հեռագրեց սուլթանին, որ Միահաղ-փաշային մահուան պատժի դատապարտելը արտասահման ամենավատ տպաւորութիւն գործեց։ Սուլթանը նոյն ուղղութեամբ այդքան հեռու պէտք է չը գնար։ Համայնքների ժողովը ընդունեց իրլանդական կալուածական օրէնքի 7-դ և 8-դ յօդուածները։

ՓԱՐԻԶ, 23 յունիսի։ „République Française“ լրագիրը մեղադրում է սուլթանին և նախագուշակում է, որ նրա գործողութիւնները Տրիպոլիի մէջ քաղաքական դըժուարութիւններ կը յարուցանեն։ Պատգամաւորների ժողովը մերժեց Մագիէ-դը-Մօնժօի առաջարկութիւնը ֆրանսիական դեսպանութիւնը Վատիկանի մէջ վերացնելու մասին։

ՓԱՐԻԶ, 24 յունիսի։ Այստեղ հասան կոմս Լօրիս-Մելիքով և Սկոբելև։

ԼՕՆԴՕՆ, 24 յունիսի։ Կանդահարից ստացված տեղեկութիւնների համեմատ Գիրշիկի և Կանդահարի մէջ էմիրի օֆիցերների փոխադարձ անբաւականութիւնները սաստկանում են։

ԱԹԷՆՔ, 24 յունիսի։ Ցունական զօրքերը գրաւում են Արտա։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ